ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերում փոփոխություններ կատարելու մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2019 թվականի հունիսի 28-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/9

«Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի կարիքների համար դեղորայքի, հականեխիչ-ախտահանիչ նյութերի և թթվածնի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

Փոփոխության առաջացման պատճառ N 1

№ 11 չափաբաժնում տեղի է ունեցել վրիպակ, կազմակերպությանը անհրաժեշտ է «Աբակտերիլ քլոր 1 լ» կամ համարժեք հականեխիչ-ախտահանիչ նյութ, որի բաղադրությունը սխալ է գրված / հրավերում կկատարվի համապատասխան փոփոխություն/:

Փոփոխության նկարագրություն՝ Կատարվել է տեխնիկական բնութագրի շտկում

11	33621641/11	ախտահանիչ հեղուկ խտանյութ *	Աբակտերիլ քլոր 1 լ կամ համարժեք: Պետք է ունենա ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ: Գործարային փաթեթավորումը 1 լ-ոց տարայով: Որակի սերտիֆիկատի առկայություն:	հատ	10

Փոփոխության հիմնավորում № 11 չափաբաժնի տեխնիկական բնութագրում տեղի է ունեցել վրիպակ, կատարվել է ուղղում, տեխնիկական բնութագրի շտկում:

Փոփոխության առաջացման պատճառ N 2
№ 12 չափաբաժնի տեխնիկական բնութագրի շտկում

Փոփոխության նկարագրություն № 12 չափաբաժնի տեխնիկական բնութագրից հեռացվել են տոկոսային պահանջները:

Փոփոխության հիմնավորում № 12 չափաբաժնի տեխնիկական բնութագրի շտկում:

Փոփոխության առաջացման պատճառ N 3
Թիվ 13 չափաբաժնի տեխնիկական բնութագրի փոփոխություն

Փոփոխության նկարագրություն՝ Կատարվել է շտկում

13	33621641/13	Ֆերմենտատիվ լվացող նյութ՝ նախատեսված բժշկական իրերի լվացման համար	Ֆերմենտներ, ինչպես նաև մի շարք ֆունկցիոնալ բաղադրիչներ (կայունացնող հավելումներ՝ թթվեցման կարգավորիչներ, լուծիչ, փրփրամարիչ, բուրավետ նյութեր, կոնսերվանտ) և 100%-ոց թորած ջուր պարունակող բազմակոմպոնենտ խտանյութ: PH 6,5-8,5: Խտանյութից ստացված աշխատանքային լուծույթները չեն առաջացնում մետաղների ժանգոտում, չեն վնասում ջերմազգայուն նյութերը, լավ լվացվում են: Կիրառվում է տարբեր նյութերից բժշկական արտադրատեսակների (բացառությամբ բնական կաուչուկի հիմքի վրա ստացված ռետինի), ներառյալ վիրաբուժական (այդ թվում խողովակ ունեցող), միկրովիրաբուժական և	հատ	10

			ատամնաբուժական (այդ թվում պտտվող) գործիքների ձեռքային եղանակով նախամանրէազերծումային մաքրման համար, կոշտ և ճկուն էնդոսկոպների ձեռքային եղանակով նախնական և նախամանրէազերծումային մաքրման համար (եզրափակիչ՝ բարձր մակարդակի ախտահանումից առաջ, էնդոսկոպներին կից գործիքների ձեռքային եղանակով նախամանրէազերծումային մաքրման համար: Գործարանային փաթեթավորումը առնվազն 1լիտրանոց 22հիկներով: Պետք է ունենա ՀՀ ԱՆ կողմից հաստատված կիրառման մեթոդական հրահանգ:		

Փոփոխության հիմնավորում № 13 չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարվել է շտկում:

Փոփոխության առաջացման պատճառ N 4

Թիվ 15 չափաբաժնի տեխնիկական բնութագրի փոփոխություն / Թիվ 15 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը սխալ է գրված հրավերում, որի պատճառով տեղի է ունեցել կրկնություն /թիվ 17 չափաբաժնով պահանջվող հականեխիչ նյութի տեխնիկական բնութագիրն է/,

Փոփոխության նկարագրություն՝ Կատարվել է շտկում

15	33621641/15	Ախտահանիչ հեղուկ վիրահատական դաշտերի մշակման համար	Կիրառման համար պատրաստի լուծույթ օրգանական ներկանյութով, 60-70% սպիրտի և գուանիդինի կամ ամինների բազմակոմպոնենտ համակցությամբ: Ախտահանիչ միջոցն օժտված լինի հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների, այդ թվում՝ տուբերկուլոզի հարուցիչների և ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, ախտածին սնկերի՝ դերմատոֆիտիաների և կանդիդոզների հարուցիչների, վիրուսների նկատմամբ: Միջոցը պետք է ունենա առնվազն երեք ժամ ազդեցություն: Պետք է ունենա ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ: Գործարանային փաթեթավորումը 1 լ 22հիկներով:	հատ	10

Փոփոխության հիմնավորում № 15 չափաբաժնի տեխնիկական բնութագրում կատարվել է շտկում

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՍՄԿԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/9 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Սահականուշ Գրիգորյանին:

Հեռախոս 0285 2 85 96
Էլ. Փոստ kapanhospital@mail.ru
Պատվիրատու «Կապանի բժշկական կենտրոն»ՓԲԸ